ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՂԱՀՐԻՅԱՆ ՄՈՒՇԵՂ ՀԱՅԿԱԶՆԻ

ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆ ԻՐԱՔԻ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1991-2011 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Է. 00.02-«Համաշխարհային պատմություն»
Մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պ. գ. դ. Ռ. Կ. Կարապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Պ. Փոլադյան
պ.գ.թ., դոցենտ Վ. Ս. Պետրոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2016 թ. հունիսի 22-ին, ժամը 15:00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2016 թ. մայիսի 21-ին

Մասնագիտական խորհրդի
գիտքարտուղար՝ պ.գ.թ. Գ. Ա. Մարգարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը. Վերջին տարիներին աշխարհում մեծացել է քրդական հարցի նկատմամբ ուշադրությունը, ինչը պայմանավորված է Իրաքում և տարածաշրջանի այլ երկրներում քրդական գործոնի ակտիվացման և ուժեղացման հետ: Քրդական խնդիրը սուննի-շիա, ինչպես նաև միջէթնիկ հակասությունների հետ մեկտեղ եղել և մնում է Իրաքի ներքաղաքական գլխավոր խնդիրներից մեկը: Դրանով է պայմանավորված թեմայի ուսումնասիրության արդիականությունը և կարևորությունը:

Թեմայի համակողմանի ուսումնասիրությունը կարևոր է քրդական հարցում Իրաքի վարած քաղաքականության առանձնահատկություններն ու օրինաչափությունները, Իրաքի ներքին կյանքում քրդական գործոնի դերն ու նշանակությունը ճիշտ ընկալելու համար: Իրաք պետությունը կանգնած է իր ամբողջականությունը պահպանելու լրջագույն խնդրի առաջ, իսկ քրդերն այդ գործում թե՛ կառուցողական, թե՛ ապակառուցողական դեր կարող են խաղալ:

20-րդ դարի 20-ական թվականներից Իրաքում քրդական շարժումը զարգացում է ապրել՝ փոքր ապստամբություններից մինչև կայացած ինքնավարության ստեղծում: Քրդական գործոնը մեծ ազդեցություն ունի թե՛ Իրաքի, թե՛ տարածաշրջանի մի շարք այլ երկրների ներքաղաքական իրավիճակի վրա և այդ երկրների կայունությանը մարտահրավեր նետելու ներուժ ունի: Մերձավոր Արևելքում 1 դար առաջ Սայքս-Պիկոյի համաձայնագրով և այլ պայմանագրերով գծված սահմանները կարող են վերանայվել նաև քրդական հարցի ակտիվացման արդյունքում: Այդ տեսանկյունից ներկայումս տարածաշրջանային մի շարք գործընթացներ խորությամբ և օբյեկտիվորեն լուսաբանելու համար արդիական նշանակություն են ստանում Իրաքում քրդական հարցի վերաբերյալ պատմական, քաղաքական, տնտեսական, իրավական տեսանկյուններից կատարվող համալիր ուսումնասիրությունները, որոնք անդրադառնում են հատկապես 1991 թ. հետո ընկած ժամանակաշրջանին:

Քրդերը բնակվում են Հայաստանի Հանրապետության անմիջական հարևանությամբ գտնվող տարածաշրջանում, իսկ նրանց մի մասն ապրում է Արևմտյան Հայաստանում, որը հայաթափվել է Հայոց ցեղասպանության հետևանքով: Բացի այդ, ՀՀ-ն ներկա փուլում որոշակի քայլեր է ձեռնարկում

Իրաքյան Քրդստանի հետ կապեր հաստատելու գործում: Այս համատեքստում արդիական են խնդրի վերաբերյալ կատարվող ուսումնասիրությունները:

Սույն աշխատանքը կատարելիս դրվել են հետևյալ նպատակները՝

- Ներկայացնել Իրաքում քրդական գործոնի դերը և առանձնահատկությունները:
- Ուսումնասիրել դե ֆակտո անկախ քրդական շրջանի ստեղծման պատճառները, դրանում Իրաքի իշխանությունների քաղաքականությունը և միջազգային հանրության արձագանքը քրդական խնդրին:
- Հետազոտել 20-րդ դարի վերջին տասնամյակում քրդական շրջանի նկատմամբ Սադդամ Հուսեյնի վարած քաղաքականությունը:
- Վերլուծել 2005 թ. ընդունված Իրաքի սահմանադրությունը՝ քրդական պահանջների և Իրաքի ամբողջականության պահպանման տեսանկյունից:
- Քննության ենթարկել Քրդստանի շրջանային կառավարության և Իրաքի դաշնային իշխանությունների հակասությունները նավթային և տարածքային հարցերում:
- Քննարկել քրդերի ձեռքբերումները 2003 թ. հետո առաջացած իրողություններում, ինքնավարութունն ամրապնդելու ուղղությամբ կատարված քայլերը, ինքնուրույն արտաքին ու նավթային քաղաքականություն վարելու փորձերը:
- Վերլուծել Իրաքյան Քրդստանի՝ անկախ պետություն դառնալու հնարավորությունները միջազգային իրավունքի, ներիրաքյան զարգացումների և տարածաշրջանային ու արտատարածաշրջանային պետությունների դիրքորոշման համատեքստում:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները

Ատենախոսության ժամանակագրությունն ընդգրկում է 1991 թ. մինչև 2011 թ. ընկած ժամանակահատվածը: Մեկնակետ ենք վերցրել Քուվեյթում Իրաքի կրած ռազմական պարտությունը, դրանից հետո բռնկված քրդական ապստամբությունը, Իրաքի հյուսիսում անթռիչք ու անվտանգության գոտիների ստեղծումը և Քրդստանի շրջանային կառավարության ձևավորումը: Ուսումնասիրությունն ավարտում ենք 2011 թվականով՝ Մերձավոր Արևելքում հեղափոխությունների և անկայունության նոր փուլի սկզբով, որը, հնարավոր է, ավարտվի տարածաշրջանում նոր սահմանների հաստատմամբ: Միևնույն ժամանակ, մեր կողմից ուսումնասիրության վերցված թեման առավել ամբողջական ներկայացնելու համար հարկ ենք համարել անդրադառնալ նաև նշված ժամանակաշրջանից դուրս տեղի ունեցած հանգուցային մի քանի իրադարձությունների, որոնք անմիջական ազդեցություն են ունեցել քննարկվող հարցի վրա:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության թեման դեռևս չի արժանացել համակողմանի և համալիր ուսումնասիրության: Սույն աշխատանքը նորույթ է պարունակում, քանի որ, ներառելով ինչպես 1991-2003 թթ.՝ Սադդամ Հուսեյնի իշխանության վերջին փուլում, Իրաքում քրդական գործոնի հետ կապված զարգացումների հետազոտությունը, այնպես էլ հետսադդամյան շրջանում այդ խնդրի զարգացման ուսումնասիրությունը, քրդական ինքնավարության դե ֆակտո և դե յուրե կայացման դինամիկան դիտարկվում է ներիրաքյան, ինչպես նաև տարածաշրջանային և միջազգային զարգացումների լույսի ներքո:

Դրան հավելենք, որ ատենախոսությունում փորձ է արվում խնդիրն ուսումնասիրել թե՛ պատմական, թե՛ քաղաքական, թե՛ իրավական հարթություններում, որոնք լրացնում են միմյանց՝ առավել ամբողջական դարձնելով պատկերը: Այդ առումով աշխատանքը, որում փաստաթղթային լայն բազա է օգտագործվել, իր բովանդակությամբ, հարցադրումներով Իրաքում քրդական խնդրի և գործոնի, Իրաքի վարած քաղաքականության ուսումնասիրության առաջին համալիր փորձն է, որը ներառում է 1991-2011 թթ.:

Ատենախոսությունում առաջին անգամ հայերեն թարգմանությամբ շրջանառության մեջ են դրվել փաստաթղթեր, որոնք ներկայացված են հավելվածների տեսքով:

Ատենախոսության մեթոդաբանական նիհմքը

Ատենախոսությունը շարադրելիս օգտագործվել են պատմահամեմատական, պատմավերլուծական մեթոդները: Կիրառվել է մի քանի լեզվով, այդ թվում՝ նաև արաբերեն աղբյուրների ու փաստերի վերլուծության և համադրման մոտեցումները:

Հետազոտության կիրառական նշանակությունը

Սույն աշխատանքի մի շարք դրույթներ և եզրահանգումներ կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հայեցակարգեր և ուղղություններ մշակող մարմինների կողմից: Մասնավորապես, այն կարող է օգտակար լինել թե՛ Իրաքյան Քրդստանի հետ հարաբերությունների կառուցման, թե՛ քրդական հարցում ՀՀ արտաքին քաղաքականության վեկտորների մշակման տեսանկյունից:

Ատենախոսության կիրառման մյուս ոլորտը գիտակրթականն է: Դրա բովանդակությունը, դրույթները կարող են օգտագործվել քրդական հարցի, Մերձավոր Արևելքի արդի հիմնախնդիրների, Իրաքի պատմության, միջազգային հարաբերությունների վերաբերյալ դասախոսություններում: Աշխատանքն օգտակար կլինի նաև քրդական հարցով զբաղվող հետազոտողների համար:

Աշխատանքի փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժնի կողմից: Դրա հիմնական դրույթներն ու եզրակացությունները ներկայացվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում, ինչպես նաև թեմային առնչվող գիտաժողովների ժամանակ:

Օգտագործված աղբյուրների և գրականությանտեսություն

Ատենախոսությունը գրվել է հայերեն, անգլերեն, արաբերեն, ռուսերեն տարաբնույթ սկզբնաղբյուրների և գրականության հիման վրա: Աշխատանքը կատարելիս վերլուծվել է փաստաթղթային մեծ բազա, օգտագործել ենք տարբեր տարիների իրաքյան և միջազգային փաստաթղթեր, արխիվային նյութեր, թեմայի վերաբերյալ արժեքավոր աշխատություններ, զեկույցներ, հոդվածներ, մամուլի հրապարակումներ, պաշտոնական հայտարարություններ:

Առհասարակ, յուրաքանչյուր երկրի, ժողովրդի կամ իրադարձությանն պատմություն սերտորեն կապված է քաղաքականության հետ: Բացառություն չեն քրդերը, քրդական խնդրի, գործոնի պատմությունը, որոնց վերաբերյալ հրապարակումները հաճախ քաղաքականացված են և քարոզչական երանգներ են կրում: Այս պատճառով փորձ ենք արել հնարավորինս ուշադիր դիտարկել յուրաքանչյուր աշխատանք, տեսակետ կամ միտք արժեքավորն առանձնացնելու համար:

Սույն հետազոտության համար սկզբնաղբյուր են ծառայել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի և ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշումները[1] Քրդստանի շրջանային կառավարության պաշտոնական կայքէջը[2], 2005 թ. ընդունված Իրաքի սահմանադրությունը[3], 1990 թ. Իրաքի սահմանադրության նախագիծը[4], 2004 թ. Իրաքի անցումային վարչական օրենքը[5], 1970 թ. քրդական ինքնավարության համաձայնագիրը[6], Իրաքյան

---

[1] UN General Assembly, Situation of Human Rights in Iraq A/57/325, 2002, http://research.un.org/en/docs/ga/resolutions, UN Security Council Resolution 687, 1991, http://www.un.org/en/sc/documents/resolutions/, UN SCR 688, 1991, http://www.un.org/en/sc/documents/resolutions/, UN SCR 986, 1995, http://www.un.org/en/sc/documents/resolutions/, UN SCR 1153, 1998, http://www.un.org/en/sc/documents/resolutions/, UN SCR 1483, 2003, http://www.un.org/en/sc/documents/resolutions/.

[2] KRG Official website, http://cabinet.gov.krd/?l=12.

[3] الدستور العراقي لعام 2005
http://www.cabinet.iq/PageViewer.aspx?id=2.

[4] Iraqi Interim Constitution, 1990, http://confinder.richmond.edu/admin/docs/local_iraq1990.pdf.

[5] قانون إدارة الدولة للفترة الانتقالية
http://www.constitutionnet.org/files/transitional_admin_law_2003.pdf.

Քրդստանի ընդունած մի շարք կարևոր փաստաթղթեր[7], Human Rights Watch իրավապաշտպան կազմակերպության[8] և Միջազգային ճգնաժամային խմբի զեկույցները[9], Սևրի պայմանագիրը, Բեռլինի պայմանագիրը, Սայքս-Պիկոյի համաձայնագիրը, Վուդրո Վիլսոնի 14 կետերը[10], քուրդ և արաբ պաշտոնյաների հայտարարություններն ու հրապարակումները[11]: Ատենախոսությունում որպես սկզբաղբյուր օգտագործվել են «Նյու Յորք Թայմս»[12], «Աշ-Շարկ Ալ-Աուսատ»[13] և այլ թերթերի արխիվները: Հավաստի վիճակագրական տվյալների համար օգտվել ենք Քրդստանի շրջանային կառավարության պաշտոնական կայքէջից, ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության, Համաշխարհային բանկի տվյալներից[14]:

Սույն ատենախոսության թեմայի ուսումնասիրությանը և լուսաբանմանը մեծապես նպաստել են հայ արևելագետների՝ Նիկոլայ

---

[6] 1970 թ. Իրաքյան Քրդստանի ինքնավարության համաձայնագրի տեքստին կարելի է ծանոթանալ Hannum H., Autonomy, Sovereignty, and Self-Determination, Revised Edition, Philadelphia, Univ. of Penn. Press, 1996.

[7] Kurdistan Regional Government Unification Agreement, 21 Jan. 2006, KRG Official Website, http://cabinet.gov.krd/a/d.aspx?r=223&l=12&a=8891&s=02010100&s=010000,

[8] Human Rights Watch, Iraq's Crime of Genocide: The Anfal Campaign Against the Kurds, New Haven, 1995, Human Rights Watch, Genocide in Iraq - The Anfal Campaign Against the Kurds, 1993, Bouckaert P., Human Rights Watch, Claims in Conflict, Reversing Ethnic Cleansing in Northern Iraq, Vol. 16, No. 4(E), New York, August 2004, Human Rights Watch, Iraq: Forcible Expulsion of Ethnic Minorities, Vol. 15, No. 3(E), New York, 2003.

[9] Iraq and the Kurds: The Brewing Battle over Kirkuk, International Crisis Group, Middle East Report No. 56, 18 July 2006, International Crisis Group, Working to Prevent Conflict Worldwide, Iraq and the Kurds: Trouble Along the Trigger Line, Middle East Report N88, Brussels, 8 July 2009.

[10] Treaty of Peace with Turkey, Signed at Sevres August 10, 1920 http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf, The Treaty of Berlin, The Maitland Mercury, 5 Sep. 1878, http://trove.nla.gov.au/newspaper/article/18830646, President Woodrow Wilson's Fourteen Points, The Avalon Project, Documents in Law, History and Diplomacy, http://avalon.law.yale.edu/20th_century/wilson14.asp,. Sykes-Picot Agreement, 1916, Encyclopædia Britannica, http://www.britannica.com/event/Sykes-Picot-Agreement.

[11] Talabani J., Barzani M., What Iraq Needs Now, 9 July 2003, http://www.nytimes.com/2003/07/09/opinion/09BARZ.html, Full text of KRG response to Iraqi Prime Minister's accusations, 1 Dec 2008, KRG website, http://cabinet.gov.krd/a/d.aspx?l=12&s=02010100&r=223&a=26811&s=010000, المالكي: تغيير الدستور ضروري لحماية وحدة العراق, 21 Jan. 2009, http://middle-east-online.com/?id=72829, 21 Jan 2009, المالكي: المحاصصة الطائفية والحزبية دمرت العراق, http://www.lebanese-forces.com/2009/01/21/32305, Final Statement of the Leader's Meeting, Sep. 17, 1998, Freie Universitat Berlin website, http://www.diss.fu-berlin.de/diss/servlets/MCRFileNodeServlet/FUDISS_derivate_000000001392/11_anhang.pdf?hosts=.

[12] New York Times Article Archive, http://www.nytimes.com/ref/membercenter/nytarchive.html.

[13] Asharq Al-Awsat, http://archive.aawsat.com/advsearch.asp.

[14] CIA, The World Factbook, https://www.cia.gov/library/publications/resources/the-world-factbook/, The Wolrd Bank Data, Iraq. http://data.worldbank.org/country/iraq

Հովհաննիսյանի[15], Վահան Բայբուրդյանի[16], Ռուբեն Կարապետյանի[17], Վահրամ Պետրոսյանի[18], Արշակ Փոլադյանի[19], Տաթևիկ Մանուկյանի[20] աշխատությունները և գիտական այլ հրապարակումները: Մասնավորապես, Իրաքի պատմության, քրդական խնդրի պատմության, հայ-քրդական առնչությունների վերաբերյալ կարևոր և արժեքավոր են Ն. Հովհաննիսյանի և Վ. Բայբուրդյանի աշխատությունները: Ռ. Կարապետյանի «Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն» գիրքն օգտակար է 20-րդ դարի 80-ականների վերջի և 90-ականների սկզբի իրաքյան իրադարձություններն ընկալելու համար:

Ատենախոսությունում օգտագործված կարևորագույն աշխատանքներից է Դևիդ ՄակԴաուելի "A Modern History of Kurds" («Քրդերի ժամանակակից պատմություն») գիրքը[21], որը քրդերի պատմության վերաբերյալ ամենահեղինակավոր ու ամենից շատ հղվող աշխատությունն է: Հեղինակն անդրադառնում է 19-րդ դարում քրդական էմիրությունների գործունեությանը, Իրաքում, Թուրքիայում, Իրանում և Սիրիայում քրդական հարցին՝ ընդհուպ մինչև 20-րդ դարի վերջ: 20-րդ դարի Իրաքի պատմության վերաբերյալ կարևոր և համալիր աշխատանք է նաև Չարլզ Տրիպի «Իրաքի

---

[15] Հովհաննիսյան Ն., Քրդական մասնակցությունը հայերի ցեղասպանությանը: Քրդական գործոնը Արեւմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում, Երևան 2016, Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 3, Երևան, 2005, Հովհաննիսյան Ն., Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հիմնահարցի կարգավորման հայկական հայեցակարգում, ԱՌՀԻ, Աշխատանքային տետրեր, Երևան, 2011:

[16] Բայբուրդյան Վ., Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, ՀՀ ԳԱԱ հրատ., Ե., 2008, Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Երևան, 2005:

[17] Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003:

[18] Պետրոսյան Վ., Խաղաղության մոնիթորինգի ուժերի խնդիրն Իրաքյան Քուրդիստանում թուրքական ռազմական ներկայության համատեքստում, Ժամանակակից Եվրասիա, Հատոր II (2), Երևան, 2013, Petrosian V.. Assyrians in Iraq. Iran & the Caucasus, Brill, Vol. 10.1, 2006, Petrosian V., The Iraqi Turkomans and Turkey. Iran & the Caucasus 7.1/2, 2003.

[19] Փոլադյան Ա., Քրդերը Աբբասյան խալիֆայության ժամանակաշրջանում (X-XIդդ.), Երևան, 1999, Փոլադյան Ա. Փոլադյան, Արշակ Քրդական ցեղերը VII—X դդ. (ըստ արաբական աղբյուրների), Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 6, Երևան, 1984:

[20] Մանուկյան Տ., Քրդական խաղաքարտը թուրք-սիրիական հարաբերություններում, Ժամանակակից Եվրասիա, Մերձավոր Արևելք. քաղաքական փոխակերպումներ, հատոր II (1), Երևան, 2003:

[21] McDowall D., A Modern History of Kurds, London, I. B. Tauris, 2004.

պատմություն»-ը[22], իսկ Իրաքում քրդերի պատմության վերաբերյալ՝ Ֆիլիպ Կրոյենբրոեկի «Քրդեր» աշխատությունը[23]: Ատենախոսությունը գրելիս կարևոր են եղել նաև քրդական հարցի հայտնի մասնագետ Մայքլ Գանտերի աշխատանքները, որոնք անդրադառնում են խնդրի ամենատարբեր ասպեկտների[24]: 1990-ականներին քրդական ինքնավարության զարգացման վերաբերյալ կարևոր են ֆրանսիացի քրդագետ Դ. Նատալիի աշխատաքները[25]: Քրդական ազգային շարժումների ուսումնասիրությանն են նվիրված ռուս քրդագետ Մ. Լազարևը աշխատանքները[26]: Ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ հետաքրքրություն են ներկայացնում նաև Ե. Պրիմակովի հուշերը[27]: Շ. Մհոյի[28] հեղինակած աշխատություններն ու գիտական հոդվածներն օգտագործվել են քրդական ինքնավարության կայացման գործընթացը լուսաբանելու համար:

Աշխատանքում լայն տեղ ենք հատկացրել քուրդ և արաբ հեղինակների աշխատություններին ու այլ գիտական հրապարակումներին, որոնք լուսաբանում են քրդական գործոնի, Իրաքում քրդական ինքնավարության ստեղծման և կայացման, ներքրդական հակասությունների, Իրաքի իշխանությունների վարած քաղաքականության հետ կապված հարցերը: Դրանց թվում են Ն. Թալաբանիի[29], Ն. Էնթեսարի[30], Ն. Մոսաքիի[31], Ռ. Սաիկիի[32], Վ. Ջվեյդայի[33], Ս. Էսկանդերի[34], Է. Ղարիբի[35],

---

[22] Tripp C., A History of Iraq, Cambridge, Cambridge University Press, 2000.

[23] Kreyenbreok P., The Kurds. A Contemporary Overview, London, 1992.

[24] Gunter M., The Contemporary Roots of Kurdish Nationalism in Iraq, Kufa Review: No.2 - Issue 1 - Winter 2013, Kufa, Gunter M., A Kurdish State In Northern Iraq?, Humboldt Journal of Social Relations, Vol. 20, No. 2, 1995, Gunter M., A de facto Kurdish State in Northern Iraq, Third World Quarterly, Vol. 14, No. 2, 1993, Abingdon, Gunter M., The Foreign Policy of the Iraqi Kurds, Journal of South Asian and Middle Eastern Studies, Vol. XX, N 3, 1997, Gunter M., A to Z of the Kurds,Toronto, 2009.

[25] Natali D., The Kurdish Quasi-State: Development and Dependency in Post-Gulf War Iraq, New York, 2010, Natali D., The Kurds and the State: Evolving National Identity in Iraq, Turkey, and Iran, Syracuse University Press, 2005.

[26] Лазарев М., Курдское движение в новое и новейшее время. М., 1987, Лазарев М., Внутрикурдские конфликты: происхождение и развитие, Сборник статей "Курдский вопрос в Западной Азии в начале XXI века", М., ИБВ, 2006.

[27] Примаков Е., Ближний Восток. На сцене и за кулисом (второя половина XX – начало XXI века), Глава XVII Курдская эпопея, Москва, 2006.

[28] Мгои Ш., Проблема национальной автономии курдского народа в Иракской республике (1958 - 1970 гг.)., Ереван, 1977.

[29] نوري طالباني، منطقة كركوك ومحاولات تغيير واقعها القومي، اربيل، 1999

[30] Entessar N., Kurdish Politics in the Middle East, Plymouth, Lexington Books, 2010.

[31] Мосаки Н., Южный (Иракский) Курдистан как важнейший фактор стабилизации Ирака, Курдский вопрос в Западной Азии в начале XXI века. Сборник статей, Институт востоковедения РАН, М., 2006, Мосаки Н., Курдистан и курдский вопрос в политике Запада и России (90-е годы XX века – начало XXI века), ИВ РАН, Москва, 2011.

Ա. Ալավիի[36], Ա. Յահյա Ալ-Բութանիի[37] աշխատանքները: Ջվեյդան անդրադառնում է քրդական ազգայնականության պատմությանը, իսկ Քիրքուքի խնդիրը համապարփակ ուսումնասիրված է Ն. Թալաբանիի կողմից: Քիրքուքի խնդրին անդրադարձել են նաև Հ. Աստարջյանը[38], Կ. Լոուրենսը[39], Գ. Սթենսֆիլդը և Լ. Անդերսոնը[40], որոնց աշխատանքները մեծապես նպաստել են ատենախոսության շրջանակներում քննարկվող մի շարք հիմնախնդիրների բազմակողմանի հետազոտությանը:

Աշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեքգլուխներից, որոնք իրենց հերթին բաժանված են 11 ենթագլուխների, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածության մեջ խոսվում է ատենախոսության թեմայի արդիականության, նպատակների ու խնդիրների մասին, հիմնավորվում է աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունը, տրվում է գրականության և սկզբնաղբյուրների համառոտ տեսությունը, աշխատանքի մեթոդաբանական հիմքն ու գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին գլուխը վերնագրված է **«Իրաքում քրդերի ներկայության քաղաքական և պատմական ակնարկ»** և բաղկացած է 3 ենթագլխից: Առաջին ենթագլուխը վերնագրված է **«Քրդական գործոնի առանձնահատկություններն Իրաքում»**, որում ներկայացվում է քրդական ազգայնականության էվոլյուցիան, որի արմատները գնում են 19-րդ դարի վերջ՝ շեյխ Ուբեյդուլլահի բարձրացրած ապստամբության տարիները:

Այս ենթագլխում քննարկվում են այն իրողությունները, որոնք քրդերին գործոն են դարձնում: Դրանք են մասշտաբայնությունը՝ քրդական գործոնի ներազդման սահմանները, պետական ինստիտուտների առկայությունը,

---

[32] Saiki R., A study of US policy towards Kurds of Iraq and Iran, 23.04.2012, http://www.ekurd.net/mismas/articles/misc2012/4/turkey3901.htm.

[33] Jwaideh W., The Kurdish National Movement: Its Origins and Development, New York, Syracuse Universitvy Press, 2006.

[34] Eskander S., Fayli Kurds of Baghdad and the Ba'ath Regime, The Kurds: Nationalism and Politics, eds. Jabar F., Dawod. H., London, SAQI, 2006

[35] Khadduri M., Ghareeb E., War in the Gulf, Oxford University Press, 1997.

[36] Allawi A., The Occupation of Iraq: Winning the War, Losing the Peace, New Haven, Conn., Yale University Press, 2007.

[37] دكتور عبد الفتاح يحيى البوتاني, وثائق عن الحركة القومية الكردية, مؤسسة موكرياني للطباعة والنشر, اربيد,2001

[38] Astarjian H., The Struggle for Kirkuk, The Rise of Hussein, Oil, and the Death of Tolerance in Iraq, London 2007.

[39] Lawrence Q., Invisible Nation: How the Kurds' Quest for Statehood Is Shaping Iraq and the Middle East, New York 2008.

[40] G. Stansfield, L. Anderson. Crisis in Kirkuk, The Ethnopolitics of Conflict and Compromise, Philadelphia, Pennsylvania University Press, 2009.

մեծաթիվ ու կանոնավոր զինված ուժերի գոյությունը, նավթային հսկայական պաշարները, որը ռազմավարական նշանակություն է հաղորդում Իրաքյան Քրդստանի տարածքին, ինքնության խնդիրը:

Երկրորդ՝ «**Իրաքի քաղաքականությունն էթնոդավանական փոքրամասնությունների նկատմամբ»** ենթագլխում խոսվում է փոքրամասնությունների նկատմամբ Իրաքի իշխանությունների, մասնավորապես, բաասական վարչակարգի իրականացած քաղաքականության մասին՝ արաբական ազգայնականության և պետության կենտրոնացման քաղաքականության լույսի ներքո: Քրիստոնյա ասորիների, ֆայլիների՝ շիա քրդերի և սուննի թուրքմենների օրինակով վերլուծվում են փոքրամասնությունների նկատմամբ տարված քաղաքականության ընդհանուր գծերն ու առանձնահատկությունները: Երկրի կենտրոնացման քաղաքականության շրջանակում վարչակարգին հավատարիմ խմբերն արտոնություններ են ստացել: Նրանք, որոնք վտանգ են ներկայացրել իշխանության համար, ճնշումների են ենթարկվել: Փոքրամասնությունների դեմ կիրառված գործիքներից են ձուլումը, ինքնության մերժումը, պետական ապարատում զտումը, տեղահանությունները, վերաբնակեցումները, մի խմբին մյուսի դեմ տրամադրումը, ձերբակալությունները, տնտեսական վատ պայմանների ստեղծումը, զինված ուժերի միջոցով բռնի գործողությունները: Այս գործիքակազմը այս կամ այն չափով կիրառվել է բոլոր փոքրամասնությունների նկատմամբ, սակայն որոշակի առանձնահատկություններ առկա են: Օրինակ, հստակ տարբերություն կարելի է նկատել շիայադավանների և ոչ շիայադավանների նկատմամբ վերաբերմունքում: Ֆայլի քրդերը, շաբակները, շիա թուրքմենները շատ ավելի ուժեղ ճնշման տակ են եղել, քանի որ իշխանությունը կասկածել է նրանց Իրանի հետ կապերի մեջ:

Կենտրոնացման քաղաքականությունը, ի տարբերություն մյուս փոքրամասնությունների, քրդերի դեպքում ցանկալի արդյունք չի բերել: Իշխանությունների կիրառած մեթոդները կարճաժամկետ արդյունք են տվել, սակայն փոքր-ինչ ավելի երկարաժամկետ կտրվածքով նպաստել են քրդերի կենտրոնախույս ու անջատողական ձգտումներին:

Վերջին՝ երրորդ ենթագլխում «**Իրաքի քրդական քաղաքականությունը 1921-91 թվականներին»**, նշված ժամանակաշրջանի պատմական համառոտ ակնարկ է, ինչն անհրաժեշտ է ուսումնասիրության առարկա ժամանակահատվածի լիարժեք և համակողմանի ընկալման համար: Առաջին համաշխարհային պատերազմից հետո քրդերը չկարողացան սեփական պետություն ստեղծել, իսկ քրդաբնակ տարածքները բաժանվեցին 4 երկրների միջև, որի մի մասն էլ կցվեց Իրաք պետությանը: Քրդերը սեփական իրավունքների ճանաչման և ինքնավարության ստեղծման

համար մշտապես հակամարտության մեջ են եղել Իրաքի կենտրոնական իշխանությունների հետ: Քրդական ըմբոստությունը ճնշելու նպատակով Բաղդադը զորքեր է ուղարկել երկրի հյուսիս: 1961-1970 թթ. հակամարտությունից հետո կողմերը պայմանավորվեցին քրդական ինքնավարության ստեղծման շուրջ, սակայն մի քանի տարի անց պատերազմը վերսկսվեց և ավարտվեց քրդերի ջախջախմամբ: Հակամարտության հաջորդ փուլն սկսվում է իրան-իրաքյան պատերազմով: Պատերազմի վերջին փուլում Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնի հրամանով քիմիական զենք կիրառվեց քրդական փեշմերգայի և խաղաղ բնակչության դեմ, որին զոհ գնացին տասնյակ հազարավոր մարդիկ:

Երկրորդ գլուխը վերնագրված է«**Քրդական ինքնավարությունը 1991-2003 թվականներին և Իրաքի իշխանությունների քաղաքականությունը քրդական հարցում»** ու բաղկացած է 4 ենթագլխից: Գլխի առաջին ենթագլուխը կրում է **«1991 թ. քրդական ապստամբության հետևանքները»** վերնագիրը: Այս ենթագլխում ուսումնասիրության առարկա են Քուվեյթում ԱՄՆ գլխավորած միջազգային կոալիցիայից Իրաքի կրած պարտությունից հետո քրդերի բարձրացրած ապստամբությունը, հետևանքները և հաջորդած զարգացումները, որոնք պատմական են քրդերի համար: Օդուժի, ծանր սպառազինության ու տանկերի կիրառմամբ իրաքյան ուժերը կարճ ժամանակում պարտության մատնեցին ապստամբներին, մոտ 1.5 միլիոն քուրդ ստիպված էին լքել իրենց բնակավայրերը:

Այս իրադարձությունները լայն արձագանք ստացան աշխարհում: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց թիվ 688 բանաձևը, որով միջազգայնացվեց իրաքյան քրդերի հարցը, ինչպես նաև առաջին անգամ իրավունք տրվեց մարդասիրական միջամտություն իրականացնել ՄԱԿ անդամ երկրում: Բանաձևի հիման վրա Իրաքի հյուսիսում անթռիչք գոտի ստեղծվեց, որը տարածվեց քրդաբնակ տարածքների վրա: Զուգահեռ ցուցաբերվող միջազգային օգնությունը հնարավորություն տվեց քրդական ինքնավարությանը Բաղդադի կողմից շրջափակման պայմաններում գոյատևել, խթանել քաղաքական կայունությունը, ինստիտուցիոնալ զարգացումը: Իրաքյան քրդերի խնդրի միջազգայնացմանը նպաստեցին մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ լրատվամիջոցների և իրավապաշտպան կազմակերպությունների գործունեությունը, Սադդամ Հուսեյնի անկանխատեսելի քաղաքականությունը, որը սպառնալիք էր դարձել տարածաշրջանի երկրների և ԱՄՆ շահերի համար:

Երկրորդ ենթագլուխը վերնագրված է «**Իրաքյան Քրդստանում պետական ինստիտուտների հիմնումը»**, և քննարկվում են Իրաքի հյուսիսում քրդական ինքնավարության զարգացման գործընթացը և խնդիրները: Սադդամ Հուսեյնը և քրդական ղեկավարությունը 1991 թ.

բանակցությունների արդյունքում չկարողացան պայմանավորվել ինքնավարության ստեղծման պայմանների վերաբերյալ: Դրանից հետո քրդերը ձեռնամուխ եղան պետական ինստիտուտների ստեղծմանը, խորհրդարանական ընտրություններ տեղի ունեցան: Խորհրդարանական ընտրությունները, Քրդստանի շրջանային կառավարության (ՔՇԿ) ստեղծումը քրդերի պատմության կարևորագույն էջերից մեկն են: Խորհրդարանը համընդհանուր քվեարկությամբ ընտրված առաջին քրդական պետական ինստիտուտն է, որը ճանաչվեց միջազգայնորեն: Սա բաասական վարչակարգի առաջին խոշոր պարտությունն էր քրդական հարցում: 1994 թ. քրդական շրջանում քաղաքացիական պատերազմ սկսվեց, ինչը ցույց տվեց քրդերի՝ չհաղթահարված պառակտվածությունը և ստվեր գցեց ինքնավար շրջանն արդյունավետ կառավարելու նրանց հնարավորությունների վրա:

Երրորդ ենթագլխի վերնագիրն է **«Իրաքյան Քրդստանը տնտեսական պատժամիջոցների և քաղաքացիական պատերազմի շրջանում»**, որում ներկայացվում է Իրաքի իշխանությունների՝ տնտեսական պատժամիջոցների քաղաքականությունը քրդական շրջանի նկատմամբ, որի նպատակն էր քրդերին անելանելի վիճակի մեջ դնելով կոտրել նրանց դիմադրությունը և պարտադրել ինքնավարության սեփական պայմանները: Իրաքյան իշխանությունները համոզված էին, որ քրդերին ցանկացած էական զիջում կխրախուսի նրանց՝ գնալու Իրաքից անջատման: Տնտեսական ծանր պայմաններին զուգահեռ 1994 թ. Իրաքյան Քրդստանում քաղաքացիական պատերազմ սկսվեց, ինչը ստվեր գցեց ինքնավարության հեղինակության վրա: Քրդական երկու առանցքային ուժերի պատերազմն ավարտվեց 1998 թ. Վաշինգտոնում ԱՄՆ-ի միջնորդությամբ ձեռք բերված համաձայնության շնորհիվ: ԱՄՆ-ի համար Քրդստանում կայունությունը կարևոր նշանակություն ուներ, քանի որ այն դիտարկվում էր որպես հարթակ Սադդամ Հուսեյնին տապալելու համար:

Չորրորդ ենթագլխի վերնագիրն է **«Քրդերի դերը Սադդամ Հուսեյնի վարչակարգի հեռացման գործում»**: Այս ենթագլխում ներկայացվում է Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնին տապալելու քաղաքականության նախապատրաստումը և այդ գործում քրդերի դերը: ԱՄՆ-ն ֆինանսավորում էր քրդական և Իրաքի մյուս ընդդիմադիր ուժերին վարչակարգի դեմ միասնական ճակատ ձևավորելու համար: 2003 թ. Իրաք ներխուժման ժամանակ Թուրքիան թույլ չտվեց իր տարածքից երկրորդ ճակատ բացել, ինչն էականորեն մեծացրեց քրդերի դերն ու կարևորությունը հյուսիսից իրաքյան բանակի վրա հարձակում ձեռնարկելու գործում: Քրդական փեշմերգան զբաղեցրեց Քիրքուքը և մի շարք այլ տարածքներ: Իրաքի պատմության ընթացքում առաջին անգամ քրդերը հարձակվողի, այլ ոչ թե պաշտպանվողի դերում էին:

Երրորդ գլուխը վերնագրված է «**Իրաքյան Քրդստանի փաստացի անկախության ամրապնդումը 2003-2011 թվականներին»** և բաղկացած է 4 ենթագլուխներից: Առաջին ենթագլխում, որի վերնագիրն է **«Իրաքի նոր սահմանադրությունը և քրդերը»**, վերլուծվում են 2004 և 2005 թվականներին ընդունված Իրաքի Անցումային վարչական օրենքը և Իրաքի սահմանադրությունը, խոսվում է Իրաքում դաշնային համակարգի ձևավորման մասին:

2005 թ.հունվարինԻրաքում խորհրդարանական ընտրություններ անցկացվեցին: Քրդական դաշինքն Իրաքի խորհրդարանում ստացավ 75 մանդատ: 2003 թ. հետո իրաքյան առաջին կառավարությունում քրդերն աննախադեպ մեծ ներկայացվածություն ունեցան, որը հնարավորություն տվեց լուրջ ազդեցություն ունենալ Բաղդադում ընդունվող ցանկացած օրենքի ու որոշման վրա: Քրդերի լայն ինտեգրումն իրաքյան պետական մարմիններում նպատակ ուներ զսպել անջատողական տրամադրությունները և պահպանել Իրաքի ամբողջականությունը: 2003-2005 թթ. քրդերն ընդլայնեցին իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքները, Բաղդադում ստացան նախագահի պաշտոնն ու լայն ներկայացվածություն խորհրդարանում: Այս ամենից հետո եկավ ձեռքբերված հաջողությունները սահմանադրորեն ամրագրելու ժամանակը: Սկսվեց նոր փուլ՝ փաստացի ունեցած ինքնավար կարգավիճակն իրավականորեն ձևակերպելու ժամանակաշրջանը: Իրաքի Սահմանադրությունը ճանաչեց Քրդական շրջանի գոյությունը և ՔՇԿ իշխանությունը շրջանի տարածքում: Քրդստանի շրջանն իր գործող իշխանություններով ճանաչվեց որպես դաշնային շրջան, իսկ շրջաններին թույլ տրվեց սեփական սահմանադրությունն ընդունել: Նոր սահմանադրությունը երաշխավորեց նաև Իրաքի եկամտի գլխավոր աղբյուր հանդիսացող նավթից քրդերի հստակ մասնաբաժինը, ինչը նախկինում երբեք ամրագրված չի եղել օրենքով:2005 թ. սահմանադրությունը, այդուհանդերձ, չի լուծում վիճելի տարածքների, ռեսուրսների շուրջ վեճերը, իշխանական լծակների բաշխման հարցը, ինչը հակասությունների նոր աղբյուր դարձավ:

Երկրորդ՝ **«Նավթի, վիճելի տարածքների և կառավարման լծակների բաշխման խնդիրները Բաղդադ-Էրբիլ հարաբերություններում»** ենթագլխում, քննարկվում են այն խնդիրները, որոնց սահմանադրությամբ լուծում չտրվեցին և թողնվեցին ապագային: Խոսքը Քիրքուքի և մյուս վիճելի տարածքների պատկանելության, նավթահանքերի շահագործման, ինչպես նաև կենտրոնի և դաշնային շրջանի լիազորությունների մասին է:

Տարածքային խնդիրների չլուծված լինելն Իրաքում լարվածության և անկայունության պատճառներից մեկն է: Վիճելի տարածքները կողմերի

համար ունեն կարևորագույն նշանակություն ինչպես զբաղեցրած դիրքի, այնպես էլ նավթային հարուստ պաշարների առկայության շնորհիվ:

Էրբիլը ցանկանում է ինքնուրույն շահագործել և արտահանել ԻՔ տարածքում գտնվող նավթահանքերը, որպեսզի ֆինանսապես անկախություն ձեռք բերի Բաղդադից: Իրաքի կառավարությունը խոչընդոտում է Էրբիլի ինքնուրույն նավթային քաղաքականությունը՝ օգտագործելով ֆինանսական և ենթակառուցվածքային լծակները:

Վարչապետ Նուրի Ալ-Մալիքին Իրաքի կենտրոնացման քաղաքականություն էր վարում, ինչը հանդիպում էր քրդերի դիմադրությանը՝ երբեմն վերածվելով բացահայտ առճակատման: Իրաքյան Քրդստանի նախագահ Մասուդ Բարզանին Ալ-Մալիքիի վարած քաղաքականությունում վտանգ էր տեսնում՝ մեղադրելով նրան իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելու մեջ:

«Տարածաշրջանային և արտատարածաշրջանային պետությունների քաղաքականությունն Իրաքյան Քրդստանում» երրորդ ենթագլխում քննության է ենթարկվում տարածաշրջանային և տարածաշրջանից դուրս գտնվող այն երկրների քաղաքականությունը, որոնք լուրջ շահեր և ազդեցության լծակներ ունեն Իրաքյան Քրդստանում: Դա լրացուցիչ կշիռ է տալիս քրդական գործոնին Իրաքում և խնդիրը զուտ ներիրաքյան հարթությունից տեղափոխում տարածաշրջանային մակարդակ: Թուրքիան և Իրանը զգուշանում են, որ Իրաքում քրդերի հաջողությունները կարող են ոգևորիչ ազդեցություն ունենալ իրենց քրդական փոքրամասնության համար: Նկատելի է, որ վերջին տարիներին Թուրքիան գերադասել է Իրաքյան Քրդստանում «փափուկ ուժի» քաղաքականություն վարել՝ իր ազդեցությունը մեծացնելով տնտեսական լծակներով: Վերջինից բացի՝ Թուրքիան Իրաքի հյուսիսում պահպանում է նաև ռազմական ներկայություն, որն ուղղված է Քրդստանի աշխատավորական կուսակցության գրոհայիններին զսպելուն: Իրանի խնդիրներն ու քաղաքականությունը հիմնականում նման են Թուրքիայի խնդիրներին՝ թույլ չտալ Իրաքյան Քրդստանի անջատում, պայքար ԻՔ-ում գտնվող իրանական քրդերի՝ անօրինական ճանաչված կազմակերպությունների դեմ, տնտեսական ներգրավվածություն: ԱՄՆ-ի քաղաքականությունն իրականացվում է Իրաքի տարածքային ամբողջականությունը պահպանելու, գործուն դաշնային համակարգ կառուցելու համատեքստում: Վաշինգտոնը դեմ է քրդական անկախության նախագծերին՝ համարելով, որ դա անկայունության նոր օջախ կարող է դառնալ Մերձավոր Արևելք տարածաշրջանում: Հատկանշական է, որ Թուրքիայի, Իրանի, ԱՄՆ-ի քաղաքականությունը մի շարք ընդհանրություններ ունեն: Մասնավորապես, նրանք դեմ են անկախ քրդական պետության ստեղծմանը: Միևնույն

ժամանակ, նրանք խրախուսում են վերահսկելի քրդական դաշնային շրջանի առկայությունը, ինչը բացառում է ուժեղ Իրաքի գոյությունը: Այս ենթագլխումխնդրին անդրադարձ կա նաև Հայաստանի Հանրապետության շահերի տեսանկյունից:

Չորրորդ ենթագլխում, որը վերնագրված է **«Իրաքյան Քրդստանի անկախության ձեռքբերման հնարավոր ուղիները»,** վերլուծվում է Իրաքյան Քրդստանում անկախ պետություն դառնալու հնարավորություններն իրավական և քաղաքական տեսանկյունից: Դե յուրե լինելով Իրաքի դաշնային միավոր՝ ԻՔ-ն դե ֆակտո անկախ պետական միավոր է, որը նպատակ ունի ինքնիշխան և ճանաչված պետություն դառնալ: Իրաքյան Քրդստանի դեպքում, ինչպես բազմաթիվ այլ հակամարտություններում, առկա է ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության հակասության խնդիրը: Ինքնորոշման իրավունքն անջատման միջոցով իրացնելու տարբերակներն այնքան էլ շատ չեն: Բացի այդ, միջազգային իրավունքի համաձայն՝ ինքնորոշման իրավունքի իրականացման արդյունքը պարտադիր չէ, որ անկախությունը լինի: Հաշվի առնելով ԻՔ անկախության նկատմամբ շահագրգիռ պետությունների և միջազգային հանրության վերաբերմունքն ու անկախության իրավական հիմնավորումների հետ կապված խնդիրները՝ քրդական անկախության ամենակարճ ճանապարհն Իրաքում դաշնային պետության թուլացումն ու կազմալուծումն է:

Հավելվածներում ներկայացված են 1970 թ. քրդական ինքնավարության վերաբերյալ համաձայնագիրը, 2005 թ. Իրաքի սահմանադրության նախաբանը:

Եզրակացությունում ամփոփված են ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները.

1. 1991-2003 թթ. Իրաքում քրդական ինքնավարության ձևավորման, քրդական գործոնի ուժեղացման կարևորագույն ժամանակաշրջան էր: Իրաքի դեմ երկու պատերազմների միջև ընկած տասնամյակը (առավել ճշգրիտ՝ 12 տարի՝ 1991 թ. հունվարից մինչև 2003 թ. մարտ) նաև Իրաքի աստիճանաբար թուլացման ժամանակահատվածն էր: Սադդամ Հուսեյնի վարչակարգի թե՛ ներքին, թե՛արտաքին ազդեցության լծակները թուլանում էին, գործողությունների հնարավորությունները դառնում ավելի սահմանափակ: Սադդամ Հուսեյնի սանձազերծած երկու պատերազմները (իրան-իրաքյան պատերազմ և Քուվեյթի օկուպացիա), ինչպես նաև ՄԱԿ-ի ընդունած պատժամիջոցները տնտեսական աղետի առաջ կանգնեցրին երկիրը:
2. Քրդերը, չնայած բազմաթիվ դժվարություններին, կարողացան հանգամանքներն օգտագործել իրենց օգտին և միջազգայնորեն ճանաչված ինքնավարություն ձևավորել: Դրան մեծամասամբ նպաստեց Իրաքի

իշխանությունների վարած անհաջող ներքին քաղաքականությունը, որը հիմնված էր բիրտ ուժի կիրառման, միջազգային հանրության անտարբերության ակնկալիքի վրա: Այդ հաշվարկները չարդարացան, Բաղդադը կորցրեց իշխանությունը քրդաբնակ հյուսիսում, որտեղից էլ 2003 թ. ապրիլին ամերիկացիները երկրորդ ճակատը բացեցին իրաքյան պատերազմում: Քրդական գործոնի ուժեղացմանը նպաստող կարևոր բաղադրիչ էր քրդական ձգտումների և Ս. Հուսեյնին տապալելու ԱՄՆ քաղաքականության համընկնումը:

3. Քրդերի միջև չկա երկարատև միասնություն, նրանց կարելի է հեշտությամբ պառակտել, ինչը քրդերը բազմիցս ապացուցել են: Օրինակ, 1994 թ. սկսած քաղաքացիական պատերազմի պատճառն ընդամենն այն էր, որ ՔԴԿ-ն և ՔՀՄ-ն չէին կարողանում պայմանավորվել մաքսային եկամուտների բաշխման շուրջ: Այս հակամարտությունն էականորեն խանգարեց ՔՇԿ-ի լիարժեք հասունացմանն ու կայացմանը: Իրաքյան վարչակարգը կարողացել է միմյանց դեմ օգտագործել ՔԴԿ-ին և ՔՀՄ-ին՝ քրդական միասնությունը թուլացնելու համար:

4. 1990-ական թթ. Բաղդադը հրաժարվեց քաղաքական համաձայնության գալ քրդերի հետ համատեղ խաղաղ գոյության համար: Իրաքյան իշխանությունները համոզված էին, որ քրդերին ցանկացած էական զիջում կխրախուսի նրանց՝ գնալու Իրաքից անջատման: Իրաքի իշխանություններն այդպես էլ լուրջ փորձեր չձեռնարկեցին քրդական հարցը լուծելու համար. քրդերին քաղաքական, տնտեսական ու մշակութային իրավունքների սահմանադրական երաշխիքներ չտրվեցին: Տասնամյակներ շարունակ նման քաղաքականությունն ստիպում էր քրդերին խորը կասկածանքով վերաբերվել Իրաքի իշխանությունների առաջարկած ցանկացած նախագծի:

5. 1990-ականների սկզբին Իրաքի հյուսիսում անթռիչք գոտիների ստեղծումը և իշխանությունների շրջափակման քաղաքականությունը 12 տարի շարունակ մեկուսացրին քրդերին երկրի մնացած տարածքից: Այս հանգամանքը քրդերին ավելի օտարեց Իրաքին պատկանելու զգացումից և նպաստեց քրդական ինքնության կայացմանը: Բացի այդ, Իրաքի պարտությունից հետո քրդերի համար վերացավ զանգվածային կոտորածների ենթարկվելու սպառնալիքը:

6. Դաշնային մոդելն Իրաքի ամբողջականությունը պահպանելու ժամանակավոր միջոց է, որը երաշխավորվում է բացառապես արտաքին ուժերի դիրքորոշմամբ: Քրդերը մի քանի պատճառ ունեն դաշնային շրջանի կարգավիճակով չբավարարվելու համար, որոնց թվում կարող ենք նշել պատմական խորն անվստահությունը և նախկին աղետների կրկնման հավանականությունը, ազգերի ինքնորոշման իրավունքից օգտվելու, անկախ

պետություն ունենալու ձգտումը և այլն: Քրդերը չեն թաքցնում, որ իրենց վերջնական նպատակն անկախ պետության ստեղծումն է: Նման իրավիճակում դաշնության կենտրոնի թույլ լինելու պարագայում ուժեղանում են անջատողական դրսևորումները, իսկ ուժեղ կենտրոնի առկայությունը սպառնում է սահմանափակել դաշնային շրջանի ինքնավարության մակարդակը:

7. 2005 թ. ընդունված Իրաքի սահմանադրությունը տվյալ պահի համար գտնված ժամանակավոր, միջանկյալ լուծում է, որը չի կարող համարժեք լինել իրաքյան իրողություններին միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարում: Կարծում ենք, որ Իրաքը նոր մայր օրենքի կարիք ունի, որը պետք է համաիրաքյան փոխհամաձայնության արդյունք կլինի և ընդունվի վիճելի հարցերի շուրջ պայմանավորվածությունների հասնելուց հետո:

8. Սադդամ Հուսեյնի հեռացումից հետո Իրաքում տարբեր ուժերի միջև ազդեցության պայքար է ընթանում: Սկզբնական շրջանում շիա արաբական և քրդական ուժերը քաղաքական կյանքից դուրս էին մղել սուննի արաբական ուժերին: 2007-2008 թթ. քրդերը և վարչապետ Նուրի Ալ-Մալիքին համագործակցում էին շիայական այլ ազդեցիկ ուժերի դեմ: Ալ-Մալիքիի դիրքերի ուժեղացման շրջանում նկատելի էր քրդական և սուննիական ուժերի համագործակցություն: Միևնույն ժամանակ սուննիները և շիաները միասին փորձում են զսպել քրդական տարածքային և այլ հավակնությունները: Այս ամենը հաճախ ներքաղաքական ճգնաժամերի պատճառ է դառնում:

9. Ֆինանսապես անկախ դառնալու համար քրդերը ցանկանում են իրավունք ստանալ ինքնուրույն տնօրինելու իրենց տարածքում գտնվող նավթահանքերը, արդյունահանումը և նավթի վաճառքը, սակայն թույլ զարգացած ենթակառուցվածքները հնարավորություն չեն տալիս բավարար չափով եկամուտ ստանալ: Էրբիլի նավթային «ինքնագործունեությանը» Բաղդադը սպառնում է, որ չի փոխանցի քրդերին հասանելիք գումարը: Դաշնային կառավարության համար նավթային գործոնն ազդեցության ամենաուժեղ լծակն է Էրբիլի վրա՝ վերջինիս զիջումներ պարտադրելու առումով:

10. Հաշվի առնելով Իրաքյան Քրդստանի անկախության նկատմամբ միջազգային հանրության վերաբերմունքն ու անկախության իրավական հիմնավորումների հետ կապված խնդիրները՝ քրդական անկախության ամենակարճ ճանապարհը Իրաք պետության փլուզումն ու դաշնային մոդելի անարդյունավետության ապացուցումն է: Քրդական ղեկավարությունը պարբերաբար փորձում է շոշափել միջազգային հանրության տրամադրությունները, սակայն անհրաժեշտ ազդակներ չի ստանում: ԱՄՆ-ն, ինչպես նաև Թուրքիան, Իրանը հանդես են գալիս Իրաքի

ամբողջականությունը պահպանելու դիրքերից: Հաշվի առնելով, որ անկախ քրդական պետության ստեղծումն ապակայունության նոր ալիք կարող է առաջացնել տարածաշրջանում, Իրաքյան Քրդստանին ներկայիս կարգավիճակի երկարատև պահպանում է սպասվում:

Ատենախոսության թեմայով հեղինակի հրապարակումները

1. Քրդական գործոնն ԱՄՆ արտաքին քաղաքականությունում, ԵՊՀ ՈՒԳԸ հոդվածների ժողովածու, Հատոր 4, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 284-287:
2. Քրդական հարցի ծագումը. 19-րդ դարի ապստամբություններից մինչև Սևր-Լոզան, Արևելագիտության հարցեր (Գիտական հոդվածների պարբերական ժողովածու) N 9, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, էջ 107-120:
3. Քրդական ինքնավարության ամրապնդումը և Իրաքի իշխանությունների քաղաքականությունը քրդերի նկատմամբ 2003 թ. հետո, Կանթեղ գիտական հոդվածներ 4 (65), Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2015, էջ 76-85:
4. Իրաքի իշխանությունների քաղաքականությունը քրդերի նկատմամբ 1991-2003 թվականներին», Լրաբեր հասարակական գիտությունների հանդես 1 (646), «Գիտություն», Երևան, 2016, էջ 99-107:
5. Քրդական գործոնի առանձնահատկություններն Իրաքում», Կանթեղ գիտական հոդվածներ, 2 (67), Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2016, էջ 112-117:

ГАГРИЯН МУШЕГ АЙКАЗНОВИЧ
КУРДСКИЙ ФАКТОР ВО ВНЕШНЕЙ ПОЛИТИКЕ ИРАКА В 1991-2011 ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02- «Всемирная история».
Защита состоится 22-го июня 2016 г., в 15:00, на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего при Институте востоковедения НАН РА,
по адресу: 0019, г. Ереван, пр. М. Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Основной задачей настоящего исследования является изучение роли и значимости курдского фактора в Ираке и политики иракского государства в отношении курдов. Изучение этой темы имеет как научное, так и прикладное значение. Курды являются государствообразующией нацией в Ираке,и от них многое зависит в деле сохранения целостности иракского государства.

Диссертация состоит из Введения, трех глав, Заключения, списка использованных первоисточников и литературы, двух приложений.

Во Введении обоснована актуальность темы, определены цели и задачи работы, представлена научная новизна, а также дан обзор и анализ использованной литературы.

В первой главе "Исторический и политический очерк курдского присутствия в Ираке" изучается развитие курдского национализма, анализируются те компоненты и обстоятельства, которые превращают иракских курдов в один из важных политических факторов в Ираке, а также в ближневосточном регионе в целом. Представлена политика Ирака, в частности, баасистского режима (1968-2003) в отношении этнических и религиозных меньшинств в свете централизации государства.

Власти Ирака применяли грубую силу, политику депортации, ассимиляции и другие средства, однако в случае курдов это привело к желаемому результату.

Во второй главе "Курдская автономия в 1991-2003 годы и политика властей Ирака в курдском вопросе" представлены курдское восстание 1991 года, международная реакция на жестокое подавление восстания, создание бесполетной зоны на Севере и Юге Ирака.

Воспользовавшись международной помощью, иракские курды впервые создали государственные институты, провели парламентские и президентские выборы. Режим Саддама Хусейна ответил курдам блокадой курдского региона. В 1994 году между Демократической партией Курдистана

(ДПК) и Патриотическим союзом Курдистана (ПСК) началась гражданская война, продолжившаяся 4 года. Несмотря на это курдам в целом удалось обрести де-факто независимость от Багдада.

Последние годы правления Саддама Хусейна – годы ослабления государственности Ирака. Серьезные внутренние проблемы и внешнее давление не позволили решить курдскую проблему традиционными силовыми методами.

В третьей главе "Укрепление де-факто независимости Иракского Курдистана в 2003-2011 годы" рассматриваются конституция Ирака 2005 года, территориальные, нефтяные и другие споры между Багдадом и Эрбилем. Приводится анализ политики некоторых государств в Иракском Курдистане, а также анализируются правовые и геополитические возможности провозглашения Иракского Курдистана как независимого государства.

Принятая в 2005 году конституция Ирака предоставила Иракскому Курдистану широкую автономию в рамках федерального Ирака. Региональное правительство Курдистана имеет право принимать собственную конституцию, содержать военные подразделения, получать стабильный доход от продажи иракской нефти. Однако, главный закон страны четко не регулирует территориальные, ресурсные споры, вопросы, касающиеся распределения властных полномочий.

Курды претендуют на Киркук и другие спорные земли и пытаются включить их в признанную территорию автономии, желая добиться самостоятельной эксплуатации нефтяных месторождении ИК и продажи нефти, однако Багдад противостоит этим попыткам, обвиняя ИК в сепаратистских настроениях.

Курдская проблема не является сугубо внутрииракской. В ИК свои интересы и рычаги имеют соседние Ираку Турция, Иран, а также США. Турция и Иран опасаются, что успехи ИК могут стать прецедентом для курдов, живущих на их территориях. Иран и в большей мере Турция проводят политику экономической экспансии в ИК, пытаясь держать регион под контролем. Обе страны время от времени осуществляют военные операции против членов организаций турецких и иранских курдов, которые скрываются в ИК. Для США курды были союзником во время войны 2003 года. Вашингтон гарантировал широкую автономию для курдов. ИК для политики США является важным фактором в сохранении целостности и стабильности Ирака.

В Заключении обобщаются основные выводы диссертации.

В приложениях представлены две документы.

GHAHRIYAN H. MUSHEGH

THE KURDISH FACTOR IN IRAQ'S INTERNAL POLICY IN 1991-2011

The defense of the dissertation will take place at 15:00 on the 22th of June, 2016 at the meeting of Specialized Council 006 acting at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan ave, 24/4.The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of theDoctor of Philosophy in the Field of "World History" 07.00.02.

SUMMARY

The main purpose of this dissertation is the examination of the role and importance of the Kurdish factor in Iraq and the politics of Iraq towards the Kurds. The examination of this topic has scientific, as well as practical value. Kurds are state-forming nation in Iraq, and the territorial integrity and stability of Iraq greatly depends on them.

The dissertation consists of the introduction, three chapters, the conclusion, bibliography and two appendices.

The introduction shows the relevance of the topic, the objectives and goals of the paper, scientific innovation, as well as a review of bibliography.

In the first chapter entitled **"Political and Historical Overview of Presence of Kurds in Iraq"**, the evolution of the Kurdish nationalism is examined, the components and factors which make the Iraqi Kurds one of the most important factors in Iraq, as well as in the Middle East, are analyzed. Here we speak about the Iraqi policy towards the ethnic and religious minorities in the light of the centralization policy. The government of Iraq undertook tough measures, deportation, assimilation and other methods against them but at the end of the day this policy against Kurds failed and proved counterproductive.

The second chapter is entitled **"Kurdish Autonomy in 1991-2003 and Iraqi Government's Policy on Kurdish Issue".** In this chapter are examined the Kurdish uprising in 1991, the international response on the fierce clampdown on the uprising by the government and creation of no-fly zones in the north and south of Iraq. With international assistance the Kurds established governmental institutions for the first time, held parliamentary and presidential elections. Saddam Hussein's regime responded with a blockade of the Kurdish area. In 1994 a civil war broke between the Democratic Party of Kurdistan (DPK) and the Patriotic Union of Kurdistan (PUK) that lasted for four years. Despite the war the Kurds were able to gain de facto independence from Baghdad. The last years of

Saddam Hussein's tenure were a period of decline for Iraq. The serious internal issues and foreign pressure did not allow solving the Kurdish by the use of force.

The third chapter is entitled **"Strengthening of De-Facto Independence of Iraqi Kurdistan in 2003-2011".** It looks into the Constitution of Iraq adopted in 2005, territorial, oil-related and other disputes between Baghdad and Erbil. It also examines the policy of some countries in Iraqi Kurdistan, analyzes legal and political opportunities for declaring Iraqi Kurdistan an independent state.

The Constitution of 2005 has granted broad autonomy to Iraqi Kurdistan within federal Iraq. Kurdistan Regional Government has the right to adopt its own constitution, keeps own military units, receives regular income from oil revenues. However the Constitution does not regulate territorial and resource-related disputes, as well as the issues of division of power. The Kurds have claims to Kirkuk and other disputable territories and attempt at including those territories within the borders of their recognized autonomy, wishing to achieve independence in production of oil in Iraqi Kurdistan and sales of oil but Baghdad counteracts the Kurdish efforts and blames Iraqi Kurdistan for separatism.

The Kurdish issue is not a purely internal one. Iraq's neighbours Turkey and Iran, as well as the United States have interests and leverages in Iraqi Kurdistan. Turkey and Iran fear that the success of Iraqi Kurdistan may set an example for the Kurds living in their territories. Iran and to a greater extent Turkey are conducting a policy of economic expansion in Iraq in order to keep the Kurdish region under their control. Both countries sometimes implement military actions against the members of organizations of Iranian and Turkish Kurds who are hiding in the territory of Iraqi Kurdistan. The Kurds were allies of the United States during the war in 2003. The U.S. Administration ensured broad autonomy for Kurds. The United States considers the Kurdish region as an important factor in terms of Iraq's territorial integrity and stability.

The Conclusion summarizes the main findings of the dissertation.

The appendices represent 2 legal documents.